ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 224

07 օգոստոս 2017թ.

ԱՐՄԱՆ ԹԱԹՈՒԼԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՀԱՆԳՍՏԻ ՏՆԱԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել Արման Թաթուլի Հովհաննիսյանը՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող տարածքում հանգստի տնակների կառուցման աշխատանքները կատարելու համար շինարարության թույլտվություն ստանալու խնդրանքով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արման Թաթուլի Հովհաննիսյանին տալ հանգստի տնակների կառուցման աշխատանքների շինարարության թույլտվություն:
2. Քաղաքապետարանի քաղաքաշինության գլխավոր մասնագետին ապահովել հանգստի տնակների կառուցման աշխատանքների սկսման համար, գործող կարգին համապատասխան անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպում և պատշաճ հսկողություն:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 225

07 օգոստոս 2017թ.

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169[1]-րդ հոդվածի 2-րդ մասով (գույքահարկի և հողի հարկի հաշվարկը սահմանված ժամկետում տեղական ինքնակառավարման մարմին չներկայացնելը), 219[1]-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. "Գալիտա" Փակ բաժնետիրական ընկերության /ՀՎՀՀ 00055738, հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի փողոց, 36-197/ նկատմամբ նշանակել վարչական տուգանք 20.000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Տուգանքը վճարել սույն որոշումը ստանալու օրվանից 15 օրվա ընթացքում Ծաղկաձոր համայնքի բյուջե՝ 900125002114 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 226

07 օգոստոս 2017թ.

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2017 թվականի օգոստոսի 11, ժամը 16:00-ին հրավիրել Ծաղկաձոր համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ ելնելով քննարկվող հարցերի անհրաժեշտությունից:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 227

07 օգոստոս 2017թ.

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՈՒՆԴ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<Գրողների Ծաղկաձորի ստեղծագործական տուն>>Փակ բաժնետիրական ընկերությանը տալ 2017 թվականի 2-րդ և 3-րդ եռամսյակների ընթացքում քաղաք Ծաղկաձոր, Ե.Չարենցի փակուղի 9 հասցեում, 180 քմ տարածքում հանրային սնունդ կազմակերպելու և իրացնելու թույլտվություն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 228

07 օգոստոս 2017թ.

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<Գրողների Ծաղկաձորի ստեղծագործական տուն>> Փակ բաժնետիրական ընկերությանը տալ 2017 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում քաղաք Ծաղկաձոր, Ե.Չարենցի փակուղի 9 հասցեում 48 քմ տարածքում ոգելից խմիչքների և 48 քմ տարածքում ծխախոտի վաճառք կազմակերպելու թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 229

07 օգոստոս 2017թ.

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՈՒՆԴ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<Միքս>> Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ 2017 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում քաղաք Ծաղկաձոր, Ա.Իսահակյան 10 հասցեում, 59 քմ տարածքում հանրային սնունդ կազմակերպելու և իրացնելու թույլտվություն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 230

07 օգոստոս 2017թ.

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<Միքս>> Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ 2017 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում քաղաք Ծաղկաձոր, Ա.Իսահակյան 10 հասցեում 59 քմ տարածքում ոգելից խմիչքների վաճառք կազմակերպելու թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 231

07 օգոստոս 2017թ.

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՈՒՆԴ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<Տոլեդո>> Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ 2017 թվականի 2-րդ և 3-րդ եռամսյակների ընթացքում քաղաք Ծաղկաձոր, Վ.Հարությունյան 12 հասցեում, 170 քմ տարածքում հանրային սնունդ կազմակերպելու և իրացնելու թույլտվություն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 232

07 օգոստոս 2017թ.

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<Տոլեդո>> Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ 2017 թվականի 2-րդ և 3-րդ եռամսյակների ընթացքում քաղաք Ծաղկաձոր, Վ.Հարությունյան 12 հասցեում 170 քմ տարածքում ոգելից խմիչքների վաճառք կազմակերպելու թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 233

07 օգոստոս 2017թ.

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 105-Ն որոշումը, ինչպես նաև Ծաղկաձոր համայնքի բնակիչ Արմեն Ռուբիկի Մանուկյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Քաղաք Ծաղկաձոր, Մայիսյան փողոց,տուն 19 հասցեի բնակիչ Արմեն Ռուբիկի Մանուկյանին տրամադրել դրամական օգնություն 50000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ առաջացած սոցիալական խնդիրների լուծման նպատակով:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 234

07 օգոստոս 2017թ.

ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 282-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով <<Արդշինբանկ>> փակ բաժնետիրական ընկերության գրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.<<Արդշինբանկ>> Փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169 [1]-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցված վարչական գործի վարույթը կարճել՝

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 235

08 օգոստոս 2017թ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Համայնքային սեփականություն հանդիսացող 0,08 հա մակերես ունեցող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ,քաղաք Ծաղկաձոր, Սարալանջի փողոց,6-րդ փակուղի, թիվ 2:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 236

08 օգոստոս 2017թ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Համայնքային սեփականություն հանդիսացող 0,06 հա մակերես ունեցող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ,քաղաք Ծաղկաձոր, Սարալանջի փողոց,6-րդ փակուղի, թիվ 2/1:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 237

08 օգոստոս 2017թ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Համայնքային սեփականություն հանդիսացող 0,06 հա մակերես ունեցող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ,քաղաք Ծաղկաձոր, Սարալանջի փողոց,6-րդ փակուղի, թիվ 4/1:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 238

08 օգոստոս 2017թ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Համայնքային սեփականություն հանդիսացող 0,09 հա մակերես ունեցող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ,քաղաք Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց, թիվ 16/4:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 239

08 օգոստոս 2017թ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Համայնքային սեփականություն հանդիսացող 0,227 հա մակերես ունեցող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ,քաղաք Ծաղկաձոր, Սարալանջի 2-րդ փողոց, թիվ 2/1:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 240

08 օգոստոս 2017թ.

2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 07-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴՈՒՄ ԱԼ 1 ԼՈՏԻ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԴԱՎԻԹ ՍԵՐԳՈՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 68-րդ և 70-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Ծաղկաձորի քաղաքային համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի թիվ 42-Ն որոշումը, 2017 թվականի օգոստոսի 07-ի թիվ 01 արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դավիթ Սերգոյի Հարությունյանին օտարել համայնքային սեփականություն հանդիսացող (սեփականության իրավունքի գրանցման վկայական N 05062017-07-0062), քաղաք Ծաղկաձոր, Խ.Կեչառեցու փողոց,թիվ 8/5 հասցեում գտնվող ,Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին չդասվող, բնակավայրերի, խառը կառուցապատման համար նախատեսված 0.0065հա մակերեսով հողամաս 323466(երեք հարյուր քսաներեք հազար չորս հարյուր վաթսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամով:
2. Դավիթ Սերգոյի Հարությունյանի հետ կնքել հողամասի օտարման պայմանագիր:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 241

08 օգոստոս 2017թ.

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. **Ծաղկաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

Քաղաքացի Նաիրա Զորայրի Կազումյանը, հանդիսանալով հողի հարկ վճարող սուբյեկտ, <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2017 թվականի հուլիսի 28-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի հիմքով Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2.Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության ԿԱ ԱԳԿ ՊԿ կողմից տրված տվյալների քաղաք Ծաղկաձոր, Մ.Մկրտչյան փողոց թիվ 16 հասցեի 0,837 հա, մակերեսով հողամասը /ծածկագիր 007-005-0021-0025/ հանդիսանում է Նաիրա Զորայրի Կազումյանի սեփականությունը, որը, <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով հանդիսանում են հարկվող օբյեկտ: Հողամասի համար վճարման ենթակա հարկը կազմում է՝ 42 792 Հայաստանի Հանրապետության դրամ: Հողի հարկի տարեկան գումարները 2015-2017 թվականների ընթացքում ժամանակին չվճարելու արդյունքում 08.08.2017 թվականի դրությամբ առաջացել է տույժ՝ 13 172 Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2017 թվականի հուլիսի 28-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով Ծաղկաձորի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2017 թվականի օգոստոսի 08-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով ծանուցվել Նաիրա Կազումյանը /հիմք փոստ.անդորրագիր/ սակայն չի ներկայացել :

3.Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի՝հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն <<Հարկերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով:

Համաձայն <<Հարկերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1-ին հոդվածի 1-ին մասի՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 16-րդ, <<Հարկերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1-ին, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Նաիրա Զորայրի Կազումյանից հօգուտ Ծաղկաձոր համայնքի բյուջե գանձել 55 964 Հայաստանի Հանրապետության դրամ, որից՝

-42 792Հայաստանի Հանրապետության դրամ՝ որպես հողամասի հողի հարկի ընդհանուր ապառք,

- 13 172 Հայաստանի Հանրապետության դրամ՝ որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում 08.08.2017 թվականի դրությամբ հաշվարկված տույժեր :

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ծաղկաձոր համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության Վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պարտապանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության Արդարադատության Նախարարության Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ծաղկաձոր համայնքի ղեկավարը:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 242

08 օգոստոս 2017թ.

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ծաղկաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Նաիրա Զորայրի Կազումյանը հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2017 թվականի հուլիսի 28-ին <Կարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <բ> ենթակետի հիմքով Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Կարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Քննարկվող անշարժ գույքը՝ հանդիսանում է քաղաքացի Նաիրա Զորայրի Կազումյանի սեփականությունը, ինչը <Գույքահարկի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Գույքի համար վճարման ենթակա գույքահարկը կազմում է 1 257 593 Հայաստանի Հանրապետության դրամ, ինչը 2016 թվականից մինչև 2017 թվականն ընկած ժամանակահատվածում չի վճարվել: Նաիրա Կազումյանի կողմից նշված ժամանակահատվածի համար գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում 27.04.2017 թվականի առաջացել է տույժ՝ 198 567 Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2017 թվականի հուլիսի 28-ին <<Կարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2017 թվականի օգոստոսի 08-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Նաիրա Կազումյանը /հիմք՝ փոստային անդորրագիր/: Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝

1) համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե.

Համաձայն <<Հարկերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 2.2-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես պարտադիր լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը:

Համաձայն <<Հարկերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1-ին հոդվածի 1-ին մասի՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի, «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 3-րդ, «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1-ին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Նաիրա Զորայրի Կազումյանից հօգուտ Ծաղկաձոր համայնքի բյուջե գանձել 1 257 593 Հայաստանի Հանրապետության դրամ, որից՝
   - 1 059 026 /մեկ միլիոն հիսունինը հազար քսանվեց/ Հայաստանի Հանրապետության դրամ, որպես քաղաք Ծաղկաձոր, Մ.Մկրտչյան փողոց թիվ 16 հասցեում գտնվող շինության համար վճարման ենթակա գույքահարկի գումար,
   - 198 567/հարյուր իննսունութ հազար հինգ հարյուր վաթսունյոթ/ Հայաստանի Հանրապետության դրամ՝ որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ծաղկաձոր համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պարտապանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, այն կներկայացվի << Վարչական դատարան՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 1.1 մասով սահմանված կարգով :

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ծաղկաձոր համայնքի ղեկավարը:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 243

08 օգոստոս 2017թ.

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ծաղկաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

<<Իգդիրիսու>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2017 թվականի հուլիսի 28-ին <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <բ> ենթակետի հիմքով Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Քննարկվող անշարժ գույքը հանդիսանում է <<Իգդիրիսու>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականությունը, ինչը <Գույքահարկի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Գույքի համար վճարման ենթակա գույքահարկը կազմում է 958 614/ ինը հարյուր հիսունութ հազար վեց հարյուր տասնչորս/ Հայաստանի Հանրապետության դրամ:

<<Իգդիրիսու>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նշված ժամանակահատվածի համար գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու, առաջացել է տույժ 475 944 /չորս յոթանասունհինգ հազար ինը հարյուր տասնչորս/ Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2017 թվականի հուլիսի 27-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2017 թվականի օգոստոսի 08-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին <<Իգդիրիսու>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչը չի ներկայացել, չնայած ծանուցվել են պատշաճ կարգով / հիմք փոստային անդորրագիր/ :

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝

1) համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե.

Համաձայն <<Հարկերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 2.2-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես պարտադիր լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը:

Համաձայն <<Հարկերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1-ին հոդվածի 1-ին մասի՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, <Տեղական ինքնակառավարման մասին>Հայաստանի Հանրապետության օրենքի, <Գույքահարկի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 3-րդ, <Հարկերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1-ին, <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<Իգդիրիսու>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից հօգուտ Ծաղկաձոր համայնքի բյուջե գանձել 958 614 /ինը հարյուր հիսունութ հազար վեց հարյուր տասնչորս/ Հայաստանի Հանրապետության դրամ, որից՝

_ 482 670 /չորս հարյուր ութսուներկու հազար վեց հարյուր յոթանասուն/ Հայաստանի Հանրապետության դրամ՝ որպես վճարման ենթական գույքահարկի գումար,

_ 475 944 /չորս հարյուր յոթանասունհինգ հազար ինը հարյուր քառասունչորս/ Հայաստանի Հանրապետության դրամ՝ որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ և տուգանք:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ծաղկաձոր համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պարտապանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, այն կներկայացվի ՀՀ Վարչական դատարան՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 1.1 մասով սահմանված կարգով :

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ծաղկաձոր համայնքի ղեկավարը:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 244

11 օգոստոս 2017թ.

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 278 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2015 թվականի նոյեմբերի 16-ի <<Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողով ստեղծելու մասին>> թիվ 278 որոշման հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ծաղկաձորի քաղաքային համայնքի
ղեկավարի 2015 թվականի նոյեմբերի 16-ի N 278 որոշման

Ծաղկաձոր համայնքի
ղեկավարի 2017 թվականի օգոստոսի 11-ի N 244 որոշման

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝ Գարիկ Հայրապետյան Ծաղկաձոր համայնքի ղեկավարի տեղակալ.

Անդամներ՝ Արտաշես Խաչատրյան՝ Ծաղկաձոր համայնքի ղեկավարի օգնական.

Արմեն Արշակյան Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ

Արա Մեսրոպյան - Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ

Արման Հարությունյան <<Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ի տնօրեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 245

11 օգոստոս 2017թ.

<<ՆՅՈՒ ՀՈՐԻԶՈՆ ԳՐՈՒՊ. ԻՆԿ>> ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ 24:00-ԻՑ ՀԵՏՈ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԵՎ ԶՎԱՐՃԱՆՔԻ ՕԲՅԵԿՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 962-Ն որոշման պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

<<Նյու Հորիզոն Գրուպ.ԻՆԿ>> ընկերության Հայաստանյան մասնաճյուղին /գործունեության հասցեն՝ ք.Ծաղկաձոր, Գլխավոր մարզահամալիրի տարածք/ տալ 2017 թվականի ընթացքում 24:00-ից հետո հանրային սննդի և զվարճանքի օբյեկտի կազմակերպման թույլտվություն:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ